ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 15-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի ԹԻՎ 14-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն, ղեկավարվելով ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» 4-Լ հրամանի 19-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2020թ. մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումներում դիմումների, բողոքների և առաջարկությունների հաշվառման, ընթացք տալու, դրանց արդյունքների վերաբերյալ միասնական հաշվետվություն ներկայացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 14-Լ հրամանով հաստատված հավելվածի 22-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«22. Յուրաքանչյուր ամսվա սկզբում, աշխատանքային 5 օրերի ընթացքում ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից, վերադասության կարգով, քաղաքացիներից ստացված բողոքների, առաջարկությունների, հանրագրերի և տեղեկատվության հարցումների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացվում ՀՀ ՆԳՆ ոստիկանության գործավարության և գաղտնիության ռեժիմի ապահովման վարչություն՝ ՀՀ վարչապետի 2021թ. մարտի 11-ի 02/14.1/6986-2021 հանձնարարականով սահմանված ձևաչափով»:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«23» 05 2023թ.

ք.Երևան